

Թիւնները, որոնք մեր ժողովուրդը բերին մինչեւ քսաներորդ դարու սեմին: Եթէ եղէ՞զն ու կաղնին կը պատկանին ռուսական թագաւորութեան, չեն ռուսմիասիրուիր նոյն սկզբունքներու լոյսին մէջ: ...: Կարճ կ'անցնիմ, վասնզի այդ գաղափարները պիտի գտնենք աւելի ուշ, կախաղանի նախօրէին, մեր մտաւորականներու ներկայացուցչական տիպարներու բերանէն արտայայտուած, տեսակ մը գերագոյն կտակ, մեռնելէ օր մը առաջ կտակուած, Այաշի արօտներուն վրայ:

...Չէ կարելի հատորով մը սպառել յուշերն ու դիտողութիւնները անոր Կարինէն, Երզնկայէն, Կեսարիայէն, նոյնիսկ կանգ առնելով միայն կարեւոր կեդրոններու վրայ: «Հագարումէկ գիշերներու հեքիաթ», ինչպէս եղան բանաձեւ, այն ատեն, իմ տպաւորութիւնները այդ ամէնէն: Թուրքերը թերեւս չզգացին ատիկա, երբ ահագին երկրի մը ամենախոլ անկիւնին մէջ անգամ սուլթան մը ապրեցաւ, առանձին ու ամենազօր: Անոնք վեհապետը ապրեցան իրենց մէջ: Հոս է ռեժիմին տարօրինակութիւնը: Տասը մարդ չունէր այդ երկիրը ռեժիմը դատող ու սուլթանը չպաշտող: Այս մտայնութիւնը հեքիաթի մը միջոցով է անշուշտ: Այդ բարեխառնութեան մէջ, մեր ժողովուրդը, ճակտին գերագոյն խարան: 915ի եղբրական ջնջումը այնքան ալ թանկ կ'ընէ հիմա այդ ամբողջը իմ աչքիս: Մեղք, որ այնքան անտարբեր ենք անոր հանդէպ: Մեր անցեալին մօտենալու այս դժկամութիւնը կնիք է մեր յետպատերազմեան գրականութեան: Միւս կողմէ այնքան քիչ բան է սեւեռուած անկէ, մեր արուեստագէտներուն միջոցով:

Այս վէպը թելադրող գլխաւոր գաղափարը փրկութիւնն էր անցեալին: Եւ սակայն կը վախնամ, թէ այդ կարգի լրիւ ռգեկոչում մը ընթերցող չունենար ալ: Բայց այդ անցեալին դէմ սա տարերային քէնը չի մնար այդպէս: Պիտի գայ օրը ու մեր տղաքը տառապանքով ու սիրով, կտոր-կտոր, իրարու կարկտեն պիտի՝ ցրիւ մեր նոթերէն վերակազմելու համար մէկ տախտակը մեր բարքերուն: